



32. ՕՉԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի ուշպար մարդ կար, չորս-հինգ տղա ուներ. ի իրադի մանդր, խմորակեր, ինքն էլ բյասիր, ողորմելի. աշխատում էր, աշխատում էր, էլի սո'ված, սո'ված:

Մի իրիկուն նստեց կնկա մոտը, ասեց.— Ա՛յ կնիկ, ես էգուց ալորի էթամ զարրություն՝ աշխատելու:

— էթում ես՝ զնա՛, ըստեղ մնում ես ի՞նչ օգուտ:

Տղեն առավոտը քնատեղիցը վե կացավ, հինգ օր զնաց, հասավ մի քաղաք: Էդ քաղաքի միջին ման էր գալի, տեհավ մի կնիկ բալկոնումը կաննած էր, երոր մոտացավ, էդ կնիկը ձեն տվեց, ասեց.— Ա՛յ տղա, վի՛րե արի, վի՛րե արի:

Տղեն շատ ուրախացավ, ասեց.— Լա՛վ ա, հարուստ կնիկ ա, գործի կդնի:

Գնաց բանձրացավ բալկոնը, կնիկն ասեց.— Ա՛րի նեքսև:

Տղեն ասեց.— Գո՞րծ կա, ասա անեմ, գամ նեքսև ի՞նչ անեմ: — Հա ա՛րի նեքսև, եգով:

Տղեն ամոթու մտավ նեքսև, կուշ էկավ, կաննեց:

Ասեց.— Խի՞ ես կաննել, ա՛րի նստի:

Կռնիցը բռնեց, նստացրեց: Սկսեց հացի պատրաստություն աննալը: Երոր հացը բերեց, իրար հետ նստեցին, կերան:

Հացը ուտելուց եղը տղեն ասեց.— Խանո՞ւմ, դե ի՞նչ անելու եմ, ասա՛, վե կենամ, անեմ:

Ասեց.— Նստի՛, խոսանք հա:

Երոր նստեցին, աղջիկն ասեց.— Ա՛յ տղա, ինձ կառնե՞ս:

Տղի սարսափը բռնեց, ասեց.— Խանո՞ւմ, էդ ի՞նչ ես ասում:
Վե կացավ որ կաննի, փեշը բռնեց.— Խի՞ ես վե կենում,—

ասեց:

Ասեց.— Խանո՞ւմ, ես մի քյասիր մարդ, էս տների տիրոնը ես
ո՞նց առնեմ:

Ասեց.— Բա՛ն չկա, ես քեզ կառնեմ:

Տղեն ասեց.— Զէ՛, չե՛մ առնի, ես երկուլ եմ անում քեզանից:

Ասեց.— Խի՞ ես երկուլ անում, ինձ չես հավանո՞ւմ:

Ասեց.— Հավանում եմ, համա էդ սիրությունի, էդ հարըս-
տությունի տեր աղջիկը ո՞նց լայաղ կանի, ինձ կառնի:

Վե կացավ, գնաց:

— Ա՛յ տղա, ո՞ւր ես էթում, ո՞ւր ես էթում:

Տղեն անկաջ շարեց, վեր էկավ գնաց: Գնաց մինչև իրիկուն
ման էկավ, իրիկունը գնաց խանը պառկեց, տեսավ լուն մի դհիցը,
ոչիլը մի դհիցը, մինչանք լիս քունը շտարավ:

Ասեց. «Ավսո՞ս», նրան պտի առած ըլնեի, հմի փափուկ դո-
շակի վրա պառկած կըլնեի:— Ասեց.— Առավոտը վե կենամ, էթամ
էլի էն քուշեն, երոր կանչեց, կէթամ, կառնեմ:

Առավոտը ուշպարը վե կացավ, էլի ման գալով էկավ հասավ
էդ բալկոնի տակը: Էդ աղջիկը բալկոնումը կաննած էր, զրան տե-
նալուն քիմի, կանչեց.— Ա՛րի վիրե, ա՛րի վիրե,— ասեց:

Էդ տղեն գնաց վիրե, երոր գնաց վիրե, էլի ամանչեց, ամոթու
կաննեց բալկոնումը, նեքսե շմտավ: Աղջիկը կոնիցը բռնեց, տա-
րավ նեքսե, էլի նստացրեց, բերեց հաց դրեց, նստեցին կերան:

Կերան, խմեցին, աղջիկն ասեց.— Ա՛յ տղա, ա՛րի ինձ առ,
չե՛ս փոշմանի:

Ասեց.— Ո՞նց անեմ, էս տների տերը, էս կարողության տերը
կարող ա մի ասկական ունենա, գա ինձ սըպանի:

Ասեց.— Ո՛չ ասկական, ո՛չ բարեկամ, ոչ մի բան չունեմ ես, ա՛ռ,
չես փոշմանի: Սավայի էս տները, տասը հատ էլ դուքան ունեմ
բազարումը, մեկումը դու նստի առըտուր արա, իննը տու քրեհով:

— Ո՛ր ասում ես, կառնեմ,— ասեց տղեն:

Աղջիկն ուրախացավ, վե կացավ, ջուր դրեց, տաքացրեց, դրեց
դրան թեշտը, լեղացրեց, բերեց մի թամուլ ձեռք շոր հագցրեց,
ասեց.— Դե գնա՛, տերտերին կանչա՛, թող գա մեղ պսակի:

Տղեն վե կացավ վազեց, տերտերին վե կալավ, բերեց: Էկավ
տերտերը պսակեց, թողաց գնաց:

Աղջիկն ասեց.—Հմի մենք էլանք մարդ ու կնիկ, մենակ մի
բան եմ խնդրվում. ես միս շեմ ուտում, միս մի բերի տուն, սիրտդ
կուպի՝ բազարումը ա՛ռ, կե՛:

Տղեն ասեց.—Շա՛տ լավ, չե՛ս ուտի՛ չե՛մ բերի:

Վե կացան, իրար ճիտ արին ու բնեցին: Թե՛ ֆը դրանց քեֆն էր:
Ըտենց ապրեցին իրեք տարի:

Իրեք տարուց եղը դուքանումը նստած վախտը խաբարն էկավ,
թե Ստամբուլա յանիցը մի մենծ բաղրկյան ա էկե, բերածը քոմմա
խաս ապրանք ա: Վե կացավ, դուքանի դուռը շինեց, գնաց էղ բա-
զրկյանի մոտը, որ տենա, թե ի՞նչ ապրանք ա բերե:

Բարե տվեց, նստեց, ասեց.—Ի՞նչ թանկագին բան ես բերե,
ուզում եմ կնկանս հմար առնեմ:

Ասեց.—Մի շատ լավ մարգարտե շապիկ կա, տա՛ր թող տե-
նա, թե վրին կըլնի, կհավանի՛ վե կա՛լ, թե չէ՛ իմ մալը եղ բե՛:

Վե կալավ, տարավ: Տարավ կնկանն ասեց.—Մի լավ բան
եմ բերե:

Ասեց.—Ի՞նչ ես բերե:

Ասեց.—Մարգարտե շապիկ, քու սիրուն շանին լայաղ:

Երոր տեհավ, ասեց.—Էս ես շեմ հագնի:

Ասեց.—Խի՛, թանկ ա դրա հմար, ես էլ քեզ դուրբա՛ն, մեր
կարողությունն էլ:

— Չէ՛, — ասեց, — ա՛յ մարդ չե՛մ հագնի:

— Չէ՛, պտի հագնեմ:

— Որ հագնեմ, կմեռնեմ, ուզում ես մեռնեմ՝ հագնե՛մ:

— Էդ ի՞նչ ես ասում, ա՛յ կնիկ, կտանեմ կտամ տիրոնը:

Վե կացավ, տարավ: Բաղրկյանն ասեց.— Խի՛ բերեցիր, շհա-
վանե՞ց, թե նեղ էկավ:

— Չէ՛, — ասեց, — չի ուզում, — ասում ա, — որ հագնեմ՝ կը-
մեռնեմ:

— Ո՛ր ըտենց ա, քու կնիկը օձ ա:

— Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ, կնիկն էլ օձ կըլնի՛:

— Միամի՛տ մարդ, էդ շապիկը ո՛ր չի հագնում, քու կնիկը
օձ ա: Քու կնիկը միս ո՞ւտում ա:

Ասեց.— Չէ՛:

Ասեց. — Օձ ա, ո՞ր օձ! Ես ստամբոլցի եմ, ես երկինք-գետինք քննել եմ, ես չեմ զիտում օձ ա։ Քեզ վեց տարի ժամանակ ա գրել, իրեթը անց ա կացե, մնացել ա իրեթը, հըլա երկուղ մի անի, իրեթ տարուց եդը նոր կազպանի քեզ։ Ըտենց շատերին ա արել, սըպանել, էդ կարողությունը հավաքել ա։

Ասեց. — Վիրե աստված, ներքե դու, պտի ինձ ազատես էղ անիրավիցը։

— Երկուղ մի անի, կազատեմ։ Էս իրեթ տարի ա ըսկի միւ տարե՞լ ես տուն։

— Զէ'։

— Ես չեմ զիդո՞ւմ՝ օձ ա քու կնիկը, միս շի ուտում։ — **Ասեց.** — Իրիկունը իրան բան շասես, առավոտը կգաս ոշխարի մսի էն լավ տեղիցը կառնես, դուքանումը կպահես մինշանք իրիկուն, իրիկունը մախսուս մթնով կէթաս, կասեն։ ՏԱՇ կնիկ, ըսօր մուշտարին շատ-շատ էր, մաշալ շարի էփիլ տայի, առավոտվանից սոված եմ, վե կա՛ց, էս միսը խորոված արա՝ ուտենք։ Կնիկը խորոված կանի, դու զոռա՝ թող մի թիքա ուտին, երոր կերավ, բնելու վախտը գնա դու գրսե, արի նեքսե. նա ո՞ր կէթա զուս՝ ինչքան տանը ջուր կա՛թափա՛, մի փարչի միջի ջուր ածա, կախ տու, դու գնա քու տեղը մտի, քնի. Երկուղ մի անի. զշերվա մի վախտը երոր ծարավացավ, էն ուղղակի կդառնա օձ. էն ժամանակը քու շանը կսկսի սառիլը, դու երկուղ մի անի, քեզ վնաս շի տա, թող վե կենա, էթա։ Կէթա, ջուր կխմի, կգա եդ, էլի կդառնա կնիկ, քու ծոցին կպառկի։ Երոր լիսը բացվի, արի իմ մոտը։

Էդ տղեն իրիկունը կնկանը բան շասեց։ Էգսի առավոտը էն զլխնն զնաց ոշխարի միսը առավ, բերեց դուքանումը պահեց, իրիկունը էկավ տուն, կնկանն ասեց։ — Ըսօր մուշտարիս շատ-շատ էր, միսն առա, մաշալ չէլավ էփիլ-տայի, մնաց. վե կա՛ց, խորոված արա՛, ուտենք։

Կնիկը վե կացավ, օջաղը վառեց, խորովածը արեց, դրեց մարդի առաջը, գնաց դրաղ նստեց։

Ասեց. — ԱՇ կնիկ, ես ուտեմ՝ բա դու ըտեղ նստե՞ս, ախար մեղք ա. սրա ֆոտը սաղ քաղաքը բռնել ա, դու մի կտոր էլ ա շես ուտում։

Ասեց. — Քեզ անուշ ըլնի՛ կե՛ր։

Ասեց. — ԱՇ կնիկ, մի թիքա էլ ա կե՛ր։

Կնիկն ամոթու մի թիբա կերավ:

Հացը վե կալան, տեղերը բցեցին. մարդը գնաց դրսե, էկավ՝ կնիկը գնաց դրսե. մարդը տան միջի ջրերը քոմմա թափեց, մի փարչ ջուր լցրեց, պատիցը կախ արեց, էկավ պառկեց, քնեց. Կնիկն էլ դրսեից էկավ՝ քնեց. Կես զշերին մարդը տեհավ, որ շանը սառեց, սառելուն քիմի զարթնեց, տեհավ կնիկը օձ դառավ, տեղաշորիցը դուռ էկավ, օթախսի մեջը ֆշալեն գե՛ս ման էկավ, դե՛ն ման էկավ, տեհավ փարչը կախ. տված ա՛ բանձրացավ խմեց, էլի վեր էկավ, էկավ տեղաշորի մեյ մտավ, էլավ էլի կնիկ:

Առավոտը էդ մարդը վե կացավ, դո՛ւզ գնաց էն բազրկյանի մոտք, ասեց.— Ո՞նց որ դու ասել իր, ընենց էլ էլավ:

Բազրկյանն ասեց.— Ես շեմ գիտո՞ւմ, որ քու կնիկը օձ ա, ես ո՛վ եմ, ա՛յ հա՛յ:

Տղեն ասեց.— Վիրու աստված, ներքեւ դու, ինձ ազատա էդ անիբավի ձեռիցը:

Ասեց.— Երկուդ մի՛ անի, կաղատեմ: Էս իրեք տարվա միջին բեղ համար ըսկի զաթա թխե՞լ ա:

— Զէ՛:

— Էս իրիկուն, երոր կէթաս, կասես. «Ա՛յ կնիկ, էս ա իրեք սարի ա քեզ առել եմ, մեկ օրից մեկ օր շասեցիր՝ մի զաթա թխեմ, մարդս ուտի. սիրտս զաթա ա ուզում, վե կա՛ց, էրկու հատ էլ ա թխած: Երոր թունդիրը կվառի, կսկսի էփիլը, ոտիցը բռնա, քցա թւմնդիրը, խուփը դի՛ բերնին: Կես սհաթից եղը խուփը վե կալ. կընի էրկու հատ կուտ; մինը բե ի՛նձ, մինը քե՛զ:

Էդ տղեն իրիկունը գնաց տուն, ասեց.— Ա՛յ կնիկ, սիրտս մի զաթա ա ուզում, էս ա իրեք տարի ա, զաթա շեմ կերե, վե կա՛ց՝ մի էրկու հատ էլ ա զաթա թխա՛, ուտենք:

— Շա՛տ լավ,— ասեց,— ա՛յ մարդ, ե՞ր ուզեցիր, որ ես չը-թխեցի:

Կնիկը առավոտը վե կացավ, զաթեն ունցեց, թունդիրը վա-ռեց, բադիով ջուրը դրեց կողքը, ձեռը տվեց ջրին, տվեց զաթի քա-մակը, կոպացավ, տվեց թունդիրի կողին, երկրորդը տալու վախտը. մարդը դրա ոններից բանձրացրեց՝ քցեց թունդիրը, խուփն էլ դրեց-բերնին: Մի կես սհաթ համբերեց: Կես սհաթից եղը խուփը վե կալավ, տեհավ բան լկա միջին, էրկու հատ կուտ ա: Կռացավ յեկը հանեց, ձեռները էրվեց՝ կուտը ըըպոտեց, էլավ էրկու կտոր.

կուացավ էն մեկը հանդարտ հանեց, հանեց դրեց կողքը: Տեհավ
ձեռները կեղտոտել ա, էն բաղիի ջրի միջին ձեռները լվաց, տեհավ
որ բաղիի ջուրը դառավ ոսկի, բաղիին էլ դառավ ոսկի, եդ դառավ
թամաշ արեց, որ կըտերն էլ են դառել ոսկի: Կըտի կեսը վե կալավ,
տարավ բաղրկյանին:

Բազրկյանն ասեց.— Ախար դու մի հատ սազը պտի բերեիր:
Ասեց.— Ներողություն, կեսն եմ բերե:

Ասեց.— էս էլ բո՞լ ա:

Տղեն բազրկյանից շնորհակալություն արեց, գնաց իրանց տու-
նը. մտածեց, ասեց.— Էթամ իմ կնկանը, էրեխեքանցս վեր ոմեմ,
բերեմ ըստեղ, մարդավարի ապրենք:

Առավոտը գնաց մի ձի առավ, մի ձեռք ասպար առավ, տումն
ու դուքանը շինեց, ձին նիլավ՝ գնաց: Գնաց, մի իրիկուն մութն
ընկավ, հասավ իրա տումը: Դուռը ծեծեց, կնիկը դուս էկավ, տե-
հավ, որ մի ձիավոր, ասպարի միջին կորած, դունը կանած ա,
վախեցավ:

Ասեց.— Ա՛յ կնիկ, դուռը բաց արա՛:

Ասեց.— Դու ո՞վ ես:

Ասեց.— Զե՞ս ճանանչում, ես եմ էլի, չե՞ս ճանանչում:

Ասեց.— Զէ՛, ո՞վ ես:

Ասեց.— Քո՞ւ մարդն եմ,— ասեց ու ձիուցը վեր էկավ, մտավ
ներսւե:

Կնիկը տեհավ դրուատ իրա մարդն ա, ասեց.— Բարո՞վ ես
էկե, էս ո՞ւր մնացիր:

Ասեց.— Եգացա, համա ցո՞լ եմ աշխատե, էկել եմ քեզ տա-
նեմ, էրեխեքանցը տանեմ:

Ասեց.— Ա՛յ մարդ, մենք ընտեղ շենք կարա ապրի, քաղաք ա,
ծախսներս շատ կըլնի, ըստեղ գեղ տեղ ա, ո՞նց ուզենք, ընե՞նց
կկառավարվենք:

Ասեց.— Ա՛յ կնիկ, մի՛ վախի, ընքան աշխատել եմ, որ քո,
օխտը պորտն էլ ուտի՛ շի հատնի:

Առավոտը վե կացան, էլած-շէլածը բաշխեցին բյասիր հա-
րեաններին, իրանք գնացին իրանց թազա տունն ու տեղը:

Նրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա՛նա էլ հաս-
նի իրա մուրազին:

Երկնքից իրեք հատ խնձոր ընկավ, մեկն՝ ասողին, մեկը՝ լսո-
ղին, մեկն էլ՝ անկաշ դնողին: